Կ-1235-29.12.2025-ՊԱ-011

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունում «մարմնի,» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի բնագավառի պետական լիազոր մարմնի,» բառերը, իսկ «և ոստիկանության» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում «իրավասու մարմնի եզրակացություն» բառերը փոխարինել «տեղեկություն» բառով.

2) լրացնել 2.1-ին և 2.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունը, էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրվելու պահից, ինքնաշխատ եղանակով փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային ռեգիստր, որի հիման վրա տվյալ անձի վարելու իրավունքն ինքնաշխատ եղանակով դադարում է:

2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված՝ վարելու իրավունքը դադարելու մասին տվյալ անձը տեղեկացվում է համապատասխան տեղեկությունը տրանսպորտային միջոցների պետական գրանցման և հաշվառման էլեկտրոնային հարթակի իր անձնական էջում արտացոլելու միջոցով, իսկ առկայության դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ են մտնում էլեկտրոնային առողջապահության համակարգի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի

նախարարության համապատասխան էլեկտրոնային ռեգիստրի միջև փոխգործելիությունն ապահովելու օրվանից:

3. Էլեկտրոնային առողջապահության համակարգի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համապատասխան էլեկտրոնային ռեգիստրի միջև փոխգործելիությունն ապահովվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Կ-1235-29.12.2025-ՊԱ-011/1 ~~**Առաջին**~~ **Երկրորդ ընթերցում**

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունում «մարմնի,» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի բնագավառի պետական լիազոր մարմնի,» բառերը, իսկ «և ոստիկանության» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում «իրավասու մարմնի եզրակացություն» բառերը փոխարինել «~~տեղեկատվություն~~ **տեղեկություն**» բառով.

2) լրացնել 2.1-ին և 2.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

~~«2.1. Անձի՝ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված առողջական վիճակի մասին տեղեկատվությունն իրավասու մարմնի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրվելուց հետո համակարգը, ինքնաշխատ եղանակով հարցում կատարելով, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային ռեգիստրից պարզում է անձի վարելու իրավունք ունենալու մասին տեղեկատվությունը:~~

~~2.2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային ռեգիստրում անձի վարելու իրավունքն ինքնաշխատ եղանակով դադարում է, եթե~~

~~էլեկտրոնային առողջապահության համակարգի հարցման արդյունքում հաստատվում է, որ հարցվող անձը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային ռեգիստրում ունի վարելու իրավունքի գործող կարգավիճակ: Սույն մասով նախատեսված՝ անձի վարելու իրավունքը դադարելու վերաբերյալ տվյալ անձը տեղեկացվում է համապատասխան տեղեկատվությունը տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակի իր անձնական էջում արտացոլելու եղանակով, իսկ առկայության դեպքում՝ նաև իր կողմից ոստիկանությանը տրամադրած էլեկտրոնային փոստին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրությամբ ստանալու միջոցով:»:~~

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունը, էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրվելու պահից, ինքնաշխատ եղանակով փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային ռեգիստր, որի հիման վրա տվյալ անձի վարելու իրավունքն ինքնաշխատ եղանակով դադարում է:

2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված՝ վարելու իրավունքը դադարելու մասին տվյալ անձը տեղեկացվում է համապատասխան տեղեկությունը տրանսպորտային միջոցների պետական գրանցման և հաշվառման էլեկտրոնային հարթակի իր անձնական էջում արտացոլելու միջոցով, իսկ առկայության դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1235-29.12.2025-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի **նախագծի 2-րդ հոդված**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի **նախագծի 2-րդ հոդվածում** օգտագործվում է «տեղեկատվությունը» եզրույթը, այնինչ առերևույթ խոսքը վերաբերում է ոչ թե «տեղեկատվությանը» (տեղեկությունը փնտրելու և ստանալու, տեղեկությունը տրամադրելու գործընթացին), այլ՝ «տեղեկությանը» (անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության,	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է**

			երևույթի վերաբերյալ ստացված կամ ձևավորված տվյալներին): Ուստի, տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետում «տեղեկատվություն» բառը փոխարինել «տեղեկություն», իսկ 2-րդ կետում նշված «տեղեկատվությունը» բառերը փոխարինել «տեղեկությունը» բառերով՝ նկատի ունենալով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածի պահանջները:		
2.	**ՀՀ կառավարություն**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի **նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ**	Իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջների ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 29-րդ հոդվածում լրացվող 2.1-ին և 2.2-րդ մասերը խմբագրել այնպես, որպեսզի անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունը, էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրվելու պահից,	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է**

			ինքնաշխատ եղանակով փոխանցվի ՀՀ ներքին գործերի նախարարությանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի անձի վարելու իրավունքի ինքնաշխատ եղանակով դադարմանը: Միաժամանակ, հաշվի առնելով օրինականության սահմանադրական սկզբունքի պահանջը, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 29-րդ հոդվածում լրացվող 2.2-րդ մասում «ոստիկանությանը» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը» բառերով: Ըստ այդմ՝ առաջարկում ենք «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի **նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի** 29-րդ հոդվածում լրացվող 2.1-ին և 2.2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.		

			«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունը, էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրվելու պահից, ինքնաշխատ եղանակով փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային ռեգիստր, որի հիման վրա տվյալ անձի վարելու իրավունքն ինքնաշխատ եղանակով դադարում է: 2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված՝ վարելու իրավունքը դադարելու մասին տվյալ անձը տեղեկացվում է համապատասխան տեղեկությունը տրանսպորտային միջոցների պետական գրանցման և հաշվառման էլեկտրոնային հարթակի իր անձնական էջում արտացոլելու միջոցով, իսկ առկայության դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային		

			հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:»:		
3.	**ՀՀ կառավարություն**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի **նախագծի 3-րդ հոդված**	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 29-րդ հոդվածում լրացվող 2.1-ին և 2.2-րդ մասերով նախատեսվող կարգավորումների լիարժեք և արդյունավետ կիրառումը հնարավոր կլինի ապահովել միայն էլեկտրոնային առողջապահության համակարգի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համապատասխան էլեկտրոնային ռեգիստրի միջև փոխգործելիության տեխնիկական ապահովման պայմաններում, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « **Հոդված 3.** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է**

			2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ են մտնում էլեկտրոնային առողջապահության համակարգի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համապատասխան էլեկտրոնային ռեգիստրի միջև փոխգործելիությունն ապահովելու օրվանից: 3. Էլեկտրոնային առողջապահության համակարգի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համապատասխան էլեկտրոնային ռեգիստրի միջև փոխգործելիությունն ապահովվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ վեցամսյա ժամկետում:»:		